

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 »
Առաստանմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 srj.
Վեցամսեայ	1.50 »
ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐԵԼԻ	

Նամուղևան տղր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին անկի անգամներու համար 20 ՕՊ զեղջ կըլայ :

Պուշկարիոյ համար ձեռքի ( 15 ԱՆԻԹԻՄ )

# ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՐԵՆՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկեշ  
Խմբագրութեան հասցեն

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յեն տրուի

Առաստանմանի համար ձեռքի ( 20 ԱՆԻԹԻՄ )

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն. որոնք վճարած չեն, կը խնդրենք անյայտ զրկել բաժնեգրները, որովհետեւ առաջին վեցամսեայ լրացաւ. Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կելլայ :

ՄԻ ՓՈՒԽԷՔ

Ամազերջի հարցաքննութիւններէն ետք՝ ամէն տեղ առհասարակ թէ՛ թուրքիոյ և թէ՛ արտասահմանի մէջ գանգատի միեւնոյն յանկերգը կը կրկնուի. մեր վարժարանները ամուլ են, մեր տղաքը հաստատուն կրթութիւն մը չեն ստանար, մեր գըրամները յուժպէտս կը ծախսուին :

Գանգատ եւ միեւնոյն գանգատը. կը նմանինք պարզապէս այն մարդուն՝ որ կզգայ իր հիւանդագին վիճակը և թախծալից դէմքով ու տխուր շեշտերով կը պատմէ իր ցաւն ամենուն անխրատի, փոխանակ խորհելու երբեք թէ՛ ի՞նչ միջոցներու հարկ է դիմել միանգամ ընդ միշտ արմատական բժշկութիւն մը ձեռք ձգելու մասին :

Յայտնուած գանգատը մասամբ մը սակայն իրաւացի է, վասնզի վարժարան մը, որքան անկերպարան վիճակի մէջ իսկ ըլլայ, միշտ իր օգուտները ունի մեր փոքրիկներուն :

Ի՞նչ են ուրեմն պատճառներն, որ կը ստիպեն մեզ յարածամ այս գանգատը կրկնելու : Գպրոցական ամուլ գրութեան շարժառիթները երկու են : Առաջին՝ չունենալ միօրինակ հաստատուն ծրագիր մը. երկրորդ՝ ամէն նոր շրջանի, ուսուցչական մարմնի փոփոխութիւն, պարզապէս նորութիւն մը ընելու ախտէն վարակուած : Նորութիւն հագուստի կապուստի մէջ, նորութիւն գըրլախարկի մէջ, լաւ. իսկ նորու-

թիւն ամէն տարի ուսուցչական մարմնի մէջ՝ անըմբռնելի է և բոլորովին հակամանկավարժական. ահա ասիկայ է այն ծիրիչ ախտը, որուն վարակումէն կը գանգատինք. և չենք իսկ խորհիր անոր միջբոստները միանգամ ընդ միշտ անհետացնելու միջոցները գտնել :

Որքան ատեն այս ազգափնաս գրութիւնը շարունակէ մեր մէջ, մեր վարժարաններէն իրական օգուտ մը չսպասենք երբեք :

Աչքի առջեւ բերէք վարժարան մը, ուր նոր տարեշրջանին առթիւ՝ ուսուցչական նոր մարմին մը պաշտօնի հրաւիրուած է. Տնօրէնն առաջին անգամ կուզէ իմանալ թէ՛ վարժարանն ունի իր յատուկ ծրագիրը : Երբ ծրագիր մը կենայ, անպատճառ փոփոխութեան ենթարկուելու դատապարտուած է ինչ ինչ գերագոյն պատճառներով. իսկ եթէ ոչ՝ բնականաբար նորը պիտի շինուի : Կը պատրաստուի ծրագիրը և անոր համաձայն նորընտիր մարմինը կսկսի վարել վարժարանը, և իր կարողութեան չափով կը ջանայ օգտակար հանդիսանալ տղայոց, կը սիրէ զանոնք և կը սիրուի անոնցմէ :

Տարին կը բոլորի, պաշտօնեան կը փոխուի, իրեն հետ ալ ծրագիրն ու ուսմանց եղանակները կը փոխուին. շատ անգամ և գրեթէ միշտ նախկին շէնքը կը քանդուի նորութիւն մը ընելու մարմնալէն բռնուած :

Ազգային պաշտօնական մարմինները նոր ընտրութիւն կը կատարեն, ուսանողը կը շուարի, ծնողքները կը գանգատին թէ՛ մեր վարժարանները չեն կրնար առողջ կրթութիւնով մը օժտել մեր զաւակները :

Կուզէք բժշկուիլ այս ախտէն... կուզէք որ ազգային վարժարաններն տեւական օգուտ մը յուռալ բերեն :

Ա. Կարող ուսուցչներու խորհրդակցութեամբ պատրաստեցէք միօրինակ ծրագիր մը, և մի փոխէք զայն ամէն տարի շարունակ :

Բ. Ուսուցչական ձեռնհաս և

խղճամիտ մարմին մը ընտրեցէք և մի փոխէք զայն ամէն տարի շարունակ (\*) :

Ահա մեր ազգային վարժարաններուն ամուլութեանը մասին գանգատելէ միանգամ ընդ միշտ գագրելու միակ միջոցները :

Ա.Ի.Օ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 24 Յունիս

Ժանտախար կամացուկ մը սկսած է ծովափերէն դէպի երկրի ներսերը տարածուիլ :

Ընթերցող, աս նիւթակաւ, մարմնական ժանտախար է. իսկ աս խընդիրը նոյնիսկ Համիտի «չէօփիլիկային» լրագրութիւնը ազատ կը քննադատէ : Ատոր վրայ չեմ ուզեր խօսիլ, իմ ակնարկս տարբեր ժանտախարի մը մասին է—բարոյակաւ ժանտախար, եւ աս ախտը աւելի վնասակար, աւելի պօզալի է. քան մարմնային ժանտախարը :

Սրդէն քանի մը ամիս առաջ գրած էի Ազգային Նահատակ հերոս Սերոբի ողբերգական մահի առթիւ : Ըսած էի որ Բաղէն վարդապետ, բացառիկ Արմաշական մը՝ մանրամասն տեղեկագիր մը գրած էր աս արիւնլուայ դէպքերուն առթիւ : Նոյն վարդապետը վերջերս ալ հաղորդեր էր Պատրիարքարան Սերոբի յաջորդի Անդրանիկի մասին, թէ և քիչ մը տարբեր ձեւով, ինչպէս վարը պիտի տեսնենք :

Ու բարոյակաւ ժանտախարի ամենէն շնական տեսակը, ամենէն քստիկի դէպքը երեւան է եկեր Մշոյ գաւառէն եկած արիւն-արցունքի խաբրիկներու ընթերցանութեան պահուն, Սառն ժողովի մէջ :

Սառն ժողով է, կը նախագահէ Օրման փաշան : Շատ մը խնդիրներէ ետքը կը կարգացուի Բաղէն վարդապետի տեղեկագիրը Կէլիէկուզանի, Մշոյ եւ Սառնոյ դէպքերու մասին : Հոս կը խոյնի Ազգային պաշտօնի հերոսներու անունները. Սերոբ, Գուրգէն եւ քիչ մըն ալ կասկածով Անդրանիկ : Ժողովական երկարակամ շնորհներն մին կը հարցնէ՝ ո՞վ են ատ Սերոբ եւ ընկերներ ըսուածները : Ու Օրմանեան կը բանայ իր բերանը. «Հիշ, ճանրմ, քանի մը Չափիսըններ

են. կըսէ, որ հայերուս գլուխին փորձանք են դարձեր»...

Բերան կայ, ընթերցող, որ յաջոր է, անկեղծ է, սուրբ է. բայց բերան ալ կայ որ «չէօփիլի» սայլէն ալ ազոտ է : Աս վերջին տեսակի բերաններէն է Օրման փաշայի բերանը...

Սիրտս պիտի ճաթեր, ամողջ հայութիւնը պիտի հայհոյէի, եթէ ատ շնական խօսքերը՝ անբարոյական, ժանտախար Պատրիարքի մը բերնէն վիժուած՝ անպատասխան մնային : Բայց ո՞չ, դեռ յուսահատուելու ազգ չենք. դեռ բոլորովին մեռած, մինչեւ ոսկրի ծուծը փճացած ժողովուրդ չենք. դեռ մարդիկ կան, թէ և խիստ սակաւ...

Ժողովականներէն մին կելլայ տեղէն եւ օրհնեալ բերանը կը բանայ, «Սրբազան, կըսէ՛ (պիտի ըսէր լրագրան) չափիսըններ են ատ մարդերը... Չափիսըններ էին եւ անոնք, ան 200,000 հայերը որ նահատակուեցան 3—4 արիւնալի տարիներու մէջ, չափիսըններ էին մեր քոյրերը ու կիները, մեր հարսներն ու աղջիկները, որ բանաբարութեան ու լրկանքի ենթարկուեցան, Չափիսըններ էին վանայ ու Սառնոյ կտրիճ նահատակները, Չէյթուրի հերոս ընկածները... Աս ամէնը չափիսըններ էին : Ամօթ է, Սրբազան, մեղք է, մահացու մեղք այդպիսի լեզու մը բանեցնել ատ անձիւրու հասցէին»...

Գեղեցիկ կը խօսի Ք. Էֆէնտին. խիստ սրտաշարժ... բայց ա՛հ. ուրու... պատերու, քարերու, փայտեղէնէ կակներու. եւ էջերու : Ամէն խօսք պէտք է յարմար հող գտնէ, եթէ ոչ կը մնայ «ձայն բարբառոյ յանապատի» : Եթէ ժողովի մէջ մէկ երկու զգայուն անձեր կային. անոնք ալ ցածհոգի վախկոտութեան պատճառով խոհեմութիւն համարեցին չունիլ :

Իսկ Օրմանեան, ժանտախար մըն է ան, բարոյական հրէշաւոր ժանտախար մը որու դէմ կոտուելու է, որու գլուխը ճգմելու աշխատելու է ամենաշնչին առիթը ներկայացած պահուն :

Ըրէ՛, Լրբագան, ըսէ, հայհոյէ, գաւառաւանդ, որքան երկար է յեղափոխականի համբերութիւնը, այնքան աւելի խորին կըլլայ անոր դաշոյնի հարուածը :

Ըրէ՛, շատցուր Մեծ-Պատէն ալ երկար մեղքերուդ շարքը. բայց միշտ մտածէ որ օրին մէկը վա՛յ պիտի տաս գլուխիդ :

(\*) Ի հարկին փոփոխութիւն մը ներմուծելի է :

Միօրինակ եւ տխուր են գաւառ-

ներէն եկած լուրերը: Միակ միւր-  
թարական երեւոյթն ան է, որ քանի  
մը երիտասարդ վարդապետներ կար-  
ծես սկսած են յարմարիլ ժամանակի  
ոգիին, կարծես կուզեն աւելի ան-  
կախ, աւելի յստակօրէն հայու բո-  
ղոքները, անոր դժոխային տան-  
ջանքները ցոլացնել, անոր գէթ  
քանի մը բաղձանքներուն ներկայա-  
ցուցիչ հանդիսանալ:

Աս վարդապետներէն մին է Բա-  
ղէշի Առաջնորդական տեղապահ Զի-  
լինկիրեանը:

Աս վարդապետը կը գրէ որ Բաղէ-  
շու գիւղերէն մէկուն մէջ գիւնով, ան-  
բարոյական հայուն մէկը տեղւոյն  
ոստիկանին հետ թուղթ կը խաղայ,  
պայմանով որ եթէ ոստիկանը հինգ  
անգամ կ'իջէ, գիւնը մը անոր կնիկը  
իր քովն առնէ պիտի. իհարկէ պայ-  
մանը կառավարիչ ոստիկանը եւ հայը  
երկիւղեմ կը համաձայնի: Ոստիկանը  
հինգ անգամ կը կ'իջէ: Երեկոյան  
կերթայ հայուն հետ տուն: Հայը իր  
կնիկին կը յայտնէ եղելութիւնը:  
Կինը «Տղամարդ» կ'ինքնին կըլլայ,  
կը քաշէ լաւ մը կը ծեծէ թէ իր ա-  
մուսինը եւ թէ Համիտի ծառայ ոս-  
տիկանը եւ երկուքն ալ զուգնէն  
զուրս կը նետէ:

Հետեւեալ օրը նոյն ոստիկանը  
կառավարիչ հայուն խաղալ միայն աս  
անգամ ոչ կնիկը՝ այլ աղջիկը սալու-  
պայմանով: Հայը նորէն կը ստիպուի  
խաղալ ու հինգ անգամ իրար վրայ  
կ'իջուի: Ոստիկանը նորէն տուն  
կերթայ, բայց նորէն կը ծեծուի քաջ  
կնիկէն: Աս անգամ խորամանկ  
թուրքը տարբեր ճամբայ կը բռնէ:  
Իսկոյն կը վազէ գայմագամին, դա-  
տիին ու մօլլային եւ կը յայտնէ, որ  
այսինչ հայը աղջիկը ինծի կուտայ,  
աղջիկն ալ կուզէ մահմէտական ըլ-  
լալ, միայն մայրը չի թողնիր:  
Իհարկէ ամէնքն ալ կը վրդովին,  
կը սրբօրին կեանքը քանջուի զէմ եւ  
փառաւոր ժողով մը կը բռնեն, աղջիկը  
կը հրաւիրեն քննութեան, բայց 16  
տարեկան հայուհին թուրքերէն չի  
գիտեր—ինչ ընել: Հայրը կը հան-  
դիսանայ միջնորդ եւ թարգման:  
Հարցեր կը տեղան խեղճ աղջկան  
վրտխին: Հայուհին կը պատասխանէ  
ամէն հարցերու «ո՛չ, չեմ ուզեր»ով,  
բայց հրէշ հայրը երկիւղէն ու կնկանը  
զէմ ունեցած ոխէն զրգարտեմ կը  
թարգմանէ «այո՛»: Զօրով կը տանին  
խեղճ աղջիկը ոստիկանին տունը եւ  
կը յանձնեն անոր իբր կին, իբր

հարձ: Հազիւ 5—6 օր կանցնի, աղ-  
ջիկը ճար կը գտնէ փախչելու ու-  
րիւնքը: Երեսնէ քիչ անց Առաջնորդարան:  
Զիլինկիրեան վարդապետը գայն կը  
զրկէ Լիմ անապատը, որ ապահով  
մնայ մինչեւ փոթորիկը անցնի:  
Բայց գայմագամ էֆէնտին շատ մը  
տեղացի հայեր կը ժողով, բանաբը կը  
լեցնէ, ըսելով որ զուր փախուցած  
էք աղջիկը—բերէ՛ք: Այն ատեն Զի-  
լինկիրեան բերել կուտայ անապա-  
տէն աղջիկը եւ իր տունը կը պահէ  
ու պաշտօնական գրութիւնով մը  
կ'իմացնէ գայմագամին, որ աղջիկը  
իր քովն է, ինքն է փախուցցեր, ին-  
չու՞ զուր տեղը աս անձեղ հայերը  
բանտն է լեցուցեր: Միւս կողմէն ալ  
խաղայն կը հեռագրէ հոս, «արդարու-  
թեան նախապահին եւ Պատրիարքա-  
րան խնդրելով մէկէն արդարութիւն,  
միւսէն՝ միջնորդութիւն ու կարգա-  
դրութիւն»:

Երկրորդ ու աւելի վճռական վար-  
դապետն է Արարկիրի Առաջնորդ  
Մուշեղը. երիտասարդ, վառվառն,  
թէնէ քիչիկ մը պոստախօս անձ  
մը:

Արարկիրի մէջ Համիտի դուր պաշ-  
տօնեաները, երեսի շափը անցուցեր  
են: Բաւական չէ որ այսիբը ջար-  
գեցին, այրիներ ու ուրբեր ստեղծե-  
ցին, այժմ ալ ամօթի ամէն քոյ  
ոսքի տակ առած այդ այրի կնիկը  
բունի կուզեն պոռնկացնել:

Անցեալները Մուշեղ վարդապետ  
կ'իմանայ որ փաթթոցաւոր մը կեր-  
թայ հայ այրիի մը տունը գայն  
բռնաբարելու, բայց կինը ճարպիկ  
կը գտնուի, կը պտայ կը կանչէ,  
զրաջի այրի կ'ինքն կուզան, մօլլայի  
փաթթոցները կը բզկտեն, մօրուքը  
կը փեթան, յաւ մը կը ծեծեն եւ  
կնամու մօլլան զխաբար փողոց կը  
նետեն:

Ուրիշ թաղի մը մէջ փաշայի մը  
տղան կը մտնէ այրիի մը տուն եւ  
զօրով գայն կը բռնաբարէ: Աս շարքը  
բաւական կերկարի, Համիտավայել  
սխաբօրծութիւնները երբ շատ կա-  
ծին, Մուշեղ վարդապետի համբե-  
րութեան բաժակը կը լեցուի: Ոչ  
գիր, ոչ վերցուի, կեկայն ու երեք  
աղուոր հեռապիկ կը պտարտուի,  
լիքը բողբօղ ու փաստերով եւ մէկը  
կը գարնէ Համիտի, մէկայը Ասիլիէի,  
երրորդը Եէլիս—Իլ—սլայմի հասցէին,

կը բողբօղ որ կրօնաւորներն ու պաշ-  
տօնեաները, զպաթիւնները եւ պէյերը  
կը պղծեն ընտանեկան սրբութիւնը,  
կանքարոյականացնեն ժողովուրդը,  
հանգիստ չեն տար ցաւերու մէջ ե-  
փող որբերուն ու այրի կնիկներուն,  
ու ասոր զէմ արդար կարգադրութիւն  
մը կը լսնդրէ ատ երեք հրէշներէն:  
Զօրորդ հեռագրով մըն ալ իր բո-  
ղոքի պատճէնը կը զրկէ Պատրիար-  
քին եւ կը պահանջէ որ միջամտու-  
թիւն ընեն:

Թէ Մուշեղի, թէ Զիլինկիրեանի  
գլխաւոր բողբօղ տեղական գայմա-  
գամներուն զէմն է:

Ի հարկէ աս ամէնը Օրման փաշայի  
համար «թօմաբոլիւններ» են, ան-  
խոնկ քայլեր են, Պէտք չէ բողբ-  
քել, այլ խոնարհիլ, սողալ, քծնիլ.  
ահա Օրմանի հաւատարմը, բայց ինչ-  
պէս կերելի աս նոր վարդապետները  
քիչ մը տարբեր կը մտածեն:

Միւս կողմէն Մշոյ տեղապահ Բաբ-  
կէն վարդապետ կը գրէ որ տեղական  
կառավարութիւնը ամէն օր նոր-նոր  
երեւակայական յեղափոխականներու  
խուժքեր կը ստեղծէ, նոր անուններ  
հրապարակ կը նետէ, որպէս զի հա-  
յերը աւելի նեղէ անոնց ունեցածը  
չունեցածը աւելի աղէկ կողպատէ:  
Վերջերս ալ կը գրէ Բաբկէն, սեղ-  
մեր են Անդրախիլ սնուն խմբապետ  
մը Կէլիէկիւզանի շրջանին մէջ, որու  
զօրութիւնը մեզի անյայտ է եւ աս  
անուան ու անոր իբր քի բազմաթիւ  
խմբիկն զէմ կուտելու համար խտու-  
թիւններն այնչափ շատուցեր են  
հայերու զէմ՝ որ չեմ կրնար նոյնիսկ  
Պոսէն եկած նպաստի ստակները  
բաժնել անօթութեան մեռնողներուն:  
Աս ձեռով կը գրէ Բաբկէն վարդա-  
պետը:

Ոչ, վարդապետ, Անդրախիլ երե-  
ւակայութիւն չէ, երկէ թաղեցիր  
Սերբի գլուխը, ատ գլուխը ասոր  
ծնեցող Անդրախիլ մը, վաղը կը  
ծնեցնէ կիրակոս մը կամ Մարկոս  
մը... ու աս շարքը անվերջ կըլլայ՝  
քանի կայ հայի սուգն ու լացը, ու-  
նոր տանջանքը, Մէկ բան մը միայն  
պահանջելը քուկին իրաւունք է,  
միւրանար Անդրախիլի զօրութիւնը,  
խոստովանէ գայն, միայն պահանջէ,  
որ անոր զէմ կուտելու եւ ոչ խաղաղ  
ժողովուրդին զէմ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄԻՏՔԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԴ-  
ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻԻՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—  
—  
Բ.

Հիմայ վայրկեան մը կանդ առ-  
նենք ու քննենք միտքը անհատին ու  
ընկերութեան յատկաբնութեան մէջ  
ունեցած կարեւորութեան տեսակե-  
տով, որպէս զի յետոյ կարողանանք  
լաւ եւս ըմբռնել թէ՛ կրօնական եւ  
գիտական դաստիարակութիւններէն  
ո՞րը աւելի կը համապատասխանէ  
բուն մտքին կոչումին:

Բնութեան ամենէն այլազան երե-  
ւոյթները, հակառակ իրենց առերե-  
ւոյթ բարդութեան, կարելի է վերա-  
ծել քանի մը սկզբնական տարբերու-  
քանի մը ընդհանուր յատկութիւն-  
ներու, որոնց բաղակցութեանէն յա-

ռաջ եկած են: Եւ ինչպէս որ հան-  
քարանութեան մէջ, բիւրեղները,  
հակառակ իրենց անհուն բազմազա-  
նութեանց, քանի մը երկրաչափա-  
կան պարզ ձևերու խառնուրդէն կը  
կազմուին, նմանապէս կենդանական  
աշխարհի մէջ, հոգեբանական երե-  
ւոյթները քանի մը տարբերակ պարզ  
կարողութիւններու արդիւնք են,  
զորս պէտք է կանխապէս ուսումնա-  
սիրած ըլլանք, երբ կուզենք իսկա-  
պէս ճանչնալ մարդը ինչպէս պէտք է  
ճանչցած ըլլանք անկիւնները, ա-  
նոնց կողմերը, յարաբերութիւն-  
ները, բիւրեղներու կազմութիւնը  
լաւ ըմբռնելու համար:

Արդ՝ ի՞նչ կայ մարդուն մէջ, երբ  
ստալին անգամ արտաքին աշխարհի  
հետ կսկսի յարաբերութեան մասնել—  
Պասկեւեն, կամ առաւելակերտ Երկու-  
յաղաւեն, որոնք իր զգայնութեան  
չնորհիւ շարունակ կ'ընկան ուղղին  
մէջ, եւ կանչեալները երբ տպարարու-  
թիւնը ջնջուի: Ասիկա շօշափելի  
նիւթը, սկզբնական տարին է որ

մարդուն մէջ երկու կերպով կրնայ  
զարգանալ, զուտ հայեցողական կամ  
ենթակայական զարգացում եւ գործ-  
նակիւն կամ սոսախայական զարգա-  
ցում: Առաջին պարագային մէջ  
միտքն է որ կը զօրծէ, երկրորդին  
մէջ կամքը:

Ուրեմն անհատին կեանքը երկու  
ուղղութիւն ունի, ճանչնալ եւ գոր-  
ծել, որոնց կը համապատասխանեն  
երկու կարողութիւններ, իմացակա-  
նութիւն կամ միտք եւ գործունէու-  
թիւն կամ կամք: Այս երկու կարո-  
թութեանց աւերջումը ինքն կը կազ-  
մէ բարոյական անհատը: Ստանք են  
որ մարդուն կուտան ինքնաճանաչու-  
թիւն եւ իր «ես»ին զազափարը,  
որով մարդը միւս կենդանի էակնե-  
րէն կը տարբերի Մենք կը մտածենք  
կըսէին սկզբնապիւնները: Իրիտատէլի  
հետեւելով, մտածելով թէ կը մտա-  
ծենք եւ կը զգանք, զգալով թէ կը  
զգանք:

Հոգեբանական ու բնաստական  
վերլուծութիւն մը ընելու դիտաւո-

նամակս երկնցաւ: Հետեւեալ ան-  
գամ կը գրեմ կիլիկիոյ Կաթողիկո-  
սութեան եւ այլ խնդիրներու մա-  
սին:

ԲԱԺ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

«Մշակ»ի 131 թուին մէջ վա-  
նէն շրկուած Յունիս 27-ամսաթիւ  
նամակ մը հրատարակուած է,  
ուրկէ կընդօրինակենք հետեւ-  
եալ հատուածը:

«Մայիսի առաջին շաբթուն  
տեղացած յորտահոս անձրեւնե-  
րը մեծ յոյս ներշնչեցին այս  
տարուան բերքերու մասին:  
Հունձքերը «Խիմարի» կողմերը  
սկսած էր երկու շաշաթ առաջ—  
թէնէ ամիսէն աւելի այրող արե-  
գակը նեղը ձգած էր անջրգի  
տեղերը: Բարեբաղդաբար ամ-  
սոյս 22-ին եւ 23-ին երկինքը խո-  
րունկ մորմոքումով մը լացաւ  
եւ գոռում գոչումով գնաց լեցնել  
Քէշիշ եւ Տօնիայ լիճերը, որոնք  
մեր ամենէն թանկագին ջրամ-  
բարները են: Սակայն հակառակ  
ասոր հացը խիստ թանգ է,  
տեղական շափը 100 դրչ, իսկ օ-  
խան 90—100 փր, Գուրուբէն,  
մանաւանդ Տիարպեքիրէն, Սը-  
ղեքէն եւ Տէհէն, ամեն օր ցո-  
րեն կուգայ, զորս գրամատէր-  
ները գնելով՝ ուղած գնով կը  
ծուխեն: Կառավարութիւնն ալ  
լուս կը մնայ այս բանին հանդէպ  
եւ գաղտնի աստիճան մըն ալ կը  
քաջալերէ, որովհետեւ այս օրեր  
գիւղերու տասանորդական տուր-  
քը կը ծախուի, հացի թանկու-  
թիւնը գիւղ առնողներուն գըր-  
գիւ պիտի ըլլայ աւելի սուղ  
գնելու՝ ի շահ կառավարութեան  
արկղին: Այս տարի գիւղերը  
կրկնապատիկ գնով կը ծախուին  
հերուան վրայ, եւ ասիկայ պատ-  
ճառ պիտի ըլլայ, որ անցեալ  
մարտէն սկսեալ 6 0/0 աւելցուած  
տուրքերը (որոնց մէջն է և տա-

ասնորդի տուրքը) անխիղճ կապալառուներուն կողմէն 10-12 0/0 առնուի :

«Այս 3.—4 շաբաթէ ի վեր միշտ կը լսուին անօթի մնաւորներու դէպքեր, որոնք կը պատահին գիւղերու մէջ : Թէեւ գարնան բացուելուն պէս՝ գիւղացիները սկսեցին խտանելներով ապրիլ, սակայն ան ալ աստիճան մը ունի . ու երկար ատեն անսընունգ մնալը իր գոհերը կը տանի կամաց կամաց : Բարերախտաբար հունձքը քանի մը օրէն ամէն տեղ ալ կ'սկսի» :

նամակէ մը կը տեղեկանանք որ, անցած տարուան առեւտուրներու սաստիկ նուազութեան և հունձքերու սակաւութեան պատճառով զգալի կերպով բարձրացած ցորենին գինը՝ հետզհետէ իջնելու վրայ է : Ներկայիս մէջ՝ ձմեռուան մէկ կտար 15 դր., ծախուած ցորենը՝ կը տրուի 10—12ի. և հացին գինը՝ որ 55—60 փարա էր, հետզհետէ իջնելու վրայ է :

### ՅՈՐԵԼԵԱՆ

ԵՐԿՉԱՐԻՒՐԱՄԵՆՍ ԶԻՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԻՆԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը իր հաստատութեան երկհարկերամեակը պիտի տօնէ Յոբելեանով մը 1901 Սեպտեմբեր 8ին (ն. Տ.) :

Յոբելեանի այս հանդէսին համար կազմուած յանձնաժողովը յայտարարութիւնով մը դիմած է ամբողջ հայութեան ծանուցանելով թէ՛ ազգայնոց աչնիւ զգուցումները չի վերադարձու համար, հանդէսը չի պիտի ամփոփուի վանական անցուկ շրջանակի մը մէջ, այլ կը փափաքին որ ամէն հայ մասնակցի անոր :

Այս յորեւեանի առթիւ Ս. Ղազարու վանքէն պիտի հրատարակուին հետեւեալ գործերը .

1. Հայապատում գիրք, որ է Հ. Ղ. Ալիշանի հաւաքած Հատուածք պատմութեանց մեր հեղինակաց, ժամանակագրական կարգաւ, մինչեւ յ'Փէ դար . համառօտ աշխարհաբար ծանօթութեամբ :
2. Լիակատար կենսագրութիւն Մխիթարայ Աբրահօր, պատկերազարդ :
3. Մխիթարեան Միաբանութեան 200 ամեայ գործունէութիւնն և նշանաւոր գործիչները, նոյնպէս պատկերազարդ :
4. Համառօտ պատմութիւն

Մխիթարայ վարուց և գործերուն, նոյն հանգիսին առթիւ ձրիաբար բաշխելի :

5. Մխիթարայ և իրեն Միաբանութեան գործունէութեան պատմութիւնը, գաղղիերէն լեզուով :

6. Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբր. իտալ. լեզուաւ :

7. Հատք ի բանից Մխիթարայ ծառային Աստուծոյ, քաղաւած իրեն սպուած և անտիպ գրութիւններէն . նոյնն անգլիերէն :

8. Պատկերազարդ մեծագիր թերթ մը, կատարուելիք հանհանգիսին պատկանող . և այլն : Յանձնարար յայտարարութեան հետ Հ. Ալիշան ալ հրաւեր նամակ մը գրած է զոր կը հրատարակենք :

### ՀՐԱԻԵՐ

ՅՈՐԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ

Նոր (ի՞) դարուս հետ կը սկսի Գ. դար Մխիթարեան ուխտիս, զոր երջանիկ հայր մեր հաստատած է Աստուծոյ և Աստուածամօր նախախնամութեամբ՝ յ'8 սեպտեմբերի 1701 տարուայ : Փափագելով այս երկու հարիւրամեայ Յոբելիին յիշատակը, ըստ կարի մերում և ըստ տկարութեան՝ արժանաւորապէս կատարել, ի միջոցի լրման և յարման երկու անցեալ դարուց և Գ.ին, յ'8 սեպտ. 1901, պարօք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանուցանել մեր պատուական Ազգայնոց, որոց բարոյական օգտին նուիրած են հայր մեր Մխիթար և իր որդիքն՝ իրենց նպատակը, ջանքն և աշխատանքը, այլ և համարձակիմք խնդրել իրենց բարեյօժար կարելի նիւթական նպատար, ի պէտս (ծախուց) պատրաստութեան հանգիսի և մնայուն Յիշատակաց Յոբելիին, որոյ համար այլեւայլ գրա-

ւոր վայելչազարդ գործք առաջարկուած և սկսուած այլ են ի հրատարակութիւն, ի պատիւ նախահօրս մերոյ և ի վայելս զինքն և իր գործը յարգողաց, որոց ընծայարարութեան կամ դըրից համեմատ՝ կ'եննէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ Յիշատակներէն, և անկարողաց այլ նպաստելու՝ մասն ձրի բաշխելիք ինչ :

Եթէ լրութիւն ազգիս հայոց՝ յիսուին, տարբեր տեսութիւն ունեցեր է և ունի, սակայն, հարկ է խոստովանիլ, որ գրեթէ առհասարակ աղնուապէս միաբաներ է այս երկերիւրամեայ շըրջանին մէջ՝ ի յարգութեան առ հայր մեր Մխիթար, ճանչնալով զնա մի ի գերագոյն բարերարաց, երախտաւորաց և պարծանաց իւրոց, որոց համաձայն օտարազգիք անգամ տեսողք իր կանգնած և կանոնաց վանաց և վարժից, վկայեն գովութեամբ և զարմանօք :

Ձեմք տարակուսիր որ այս նոր՝ երրորդ՝ դարուս սկզբան և ընթացից մէջ այլ նորագէ հայրն Մխիթար իր եռաշնորհ հոգին՝ Աստուածսիրութեան, ընկերսիրութեան և իմաստասիրութեան յ'Որդիս իւր, և ըլլայ անգաղար բարեխօս վասն Ազգիս, ճայնակցելով իր և մեր նախնի երանաւետ Ս. Հարց՝ Լուսաւորչաց Հայոց :

Հ. Աւուղ Մ. Ալիշան

### ՉՈՒԱՐԱՆ „ԿՈՒԹԷՆՊԵՐԿ“

(Տպագրական տառերու)

Կարծր մետաղ . Ուղիղ կարգ Հաւասար քարձորաքիւն

Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով . Հասցէ՝

Fonderie typographique „Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3 .

—)(—

մով, յետոյ իր գիտակից ու անդրադարձ կամքին հաճութեամբ : Ամէն մարդ ունի այս կարողութիւնը որ զանազան անհատներու մէջ կը տարբերի ոչ թէ իր ընտելեամբ, այլ աստիճանով : Իր ամենապարզ աստիճանէն սկսեալ, ուր առհասարակ խելք — bon sens — անուր կ'առնէ, մինչեւ իր ամենաբարձր արտայայտութիւնը, որ հանձար կը կոչուի . միտքը իսկական նպատակ ունի ճշմարտութիւնը ճանչնալ, այսինքն ճանչնալ իրերը և անոնց յարաբերութիւնները . ճշմարտութիւնը մտքին օրէնքն է, ինչպէս արգարութիւնը խղճին : Անիկա հոգիներու ուժն է, որովհետեւ անհատին ինչպէս ընկերութեան զատարակութեան մէջ, իւրաքանչիւր ճշմարտութիւն որոնց մարդ կը տիրանայ, նոր ճշմարտութեան մը յենակէտը և նոր յատուցումութեան մը մեկնակէտը կը հանդիսանայ :

Գիտութեան ի յայտ բերած ճշմարտութիւնները կրնան մեզի լիակէս

ցուցնել ճշմարտութեանց իրարու հետ ունեցած այս անհրաժեշտ կապակցութիւնը և անոնց պարունակած ուժակիր բեղունութիւնը : Մարդ մը բազմաբարութիւն կունենայ պատելու թէ՛ պողպատէ ասեղ մը մաքնիսաքարի շփումով միշտ դէպի Հիւսիս ուղղուելու տարօրինակ յատկութիւնը կունենայ, իսկոյն կողմնացոյցը կը շինուի, և անա մարդիկ կը տիրանան անսահման ջուրերուն . կը ծանօթանան նորանոր տխարահներու և կընթանան անթոյր և անբազազող կապոյտին վրայէն այնքան ապահովութեամբ, որքան ապահովութեամբ կը քալեն ցամաքին վրայ իրենց բնակած տունը հասնելու համար : — Նմանապէս, ուրիշ մը հնարքը կը գտնայ ջուրի շոգիին ուժը կանոնաւոր շարժանց հնազանդեցնելու . և անա այս վիթխարի ուժը կը քալի աշխատիլ անդադար . հոս կը հիւսէ, հոն կը մանէ, անդին հսկայ զանգուածներ կը շարժեցնէ կամ կը քալեցնէ, և . օր մըն ալ

կոչուած է մարդկային ամենէն տաժանելի աշխատութիւնները կատարելու : Ու, երբ մտածենք թէ այս ամէնը սերտ կերպով կապուած են այն գիտելիք որուն համեմատ մարդ մը հանձարեղօրէն խորհեցաւ փայտէ տախտակներու վրայ նշանագրերը փոխադրել և տպագրութիւնը ստեղծեց . գիւտ մը որ կոչուած էր ամբողջ սերունդներ յեղաշրջելու և նոր քաղաքակրթութիւններ ստեղծելու, որ պիտի տայածէր ու ժողովրդականացնէր մարդկային մտքին ամէն մէկ արդիւնքները, այն ատեն պիտի կարողանանք դիւրաւ ըմբռնել թէ որքան անբաժանելիօրէն ճշմարտութիւնները կապուած են իրարու, և թէ ինչպէս նոր ճշմարտութիւն մը միշտ խթան մը եղած է ու պիտի ըլլայ մարդկութեան համար աւելի անդայթ ու աւելի արագ քայլերով գիւտելու դէպի յատուցումութիւն :

Մտածման կեանքին վրայ ունեցած ազդեցութիւնը այնքան անսահման է որ, միակ գաղափար մը, ի-

րաւ կամ սուտ, լաւ կամ գէշ, երբ անգամ մը մտքի մը մէջ, և և մասնաւոր խումբ մը մտքերու մէջ բոյն գնէ, իր ետեւէն կը բերէ անհաշուելի հետեւանքներ . այնպէս որ շատ մարդիկ անոր ուժէն սարսափած՝ առիթ չեն փախցուցած ամէն միջոց գործադրելու մտքին զարգացումը արգելելու համար : Անշուշտ ապականած մտքերու տարածումը ամենէն յոռի արդիւնքները կրնայ ունենալ : Բայց մէկ քանի վնասակար գաղափարներու համար ամբողջ միտքը չէ կարելի անգործութեան դատապարտել : Մտաի մը մէկ քանի պտուղները որ դերին կերուած ըլլալուն համար ամբողջ ծառը չենք կտրեր, ինչ որ ալ ըլլայ, միտքը մարդկութեան ամենէն թանկագին գանձերէն մէկն է և իր բարոյական կեանքին գերազանց գործիքը, զոր պէտք է խնամքով զարգացնենք :

ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

4. Պոլսէն կը հեռագրեն Յուլիս 26 թուականով:

«Բաղէշէն ստացուած հիւպատոսական տեղեկագիրներ կը հաստատեն թէ՛ Բաղէշի հրամանատար Ֆէրիք Ալի փաշայի հրամանով տաճկական զօրքերը օժանդակութեամբ քիւրտերու վերջերս կործաներ են հայկական գիւղ մը, Սփալանգ, Սասունի գաւառին մէջ, և սպաններ են ամբողջ բնակիչները, էրիկ մարդ, կին ու տղայ, մօտաւորապէս 200 հոգի:

«Այրեր են նաև Սփալանգի հայոց եկեղեցին, ուր կը գրտնուին եղեր 18 հոգի, որոնց հետ 80 տարեկան քահանայ մը:

«Գիւղին միթարին կնկանը վրայ՝ որ յլի վիճակի մէջ է եղեր, վայրագ գազանութիւններ գործադրեր են:

«Ալի փաշա ուրիշ երեք հայ գիւղեր ալ աւերելու հրաման տուած է:

«Այս գազանութիւններուն պատճառը յեղափոխականներ գտնուելն է եղեր: Ալի փաշա իր տեղեկագրով միայն 18 հոգի սպաննուած ըլլալը կը վեկուցանէ»:

Նախորդ թուով ծանուցած էինք՝ Պոլսոյ թերթերէն առնելով Անդրանիկի խումբին ձերբակալուելը ու Սասուն տարուելը: Ինչպէս կերելի Սասնոյ կողմերը սարսափները վերսկսուած են, որոնց մասին ուրիշ աւելի նոր մանրամասնութիւններ կը պակսին:

— Վանայ Այցելու Հովիւ ներսէս եպիսկոպոսի տեղեկագրին վրայ, Կրօն. ժողովը Սահակ վարդապետը Լիմի վանահայր՝ և Ստեփան վարդապետն ալ Կոնստանդնուպոլիս նշանակած է:

— Մալաթիոյ Ս. Լուսաւորիչ վանքին որբանոցին տարեկան հարցաքննութիւնները յուլիս 9ին տեղի ունեցեր են հրապարակային հանգէսով մը:

Տեղացի հայ երեւելիները ինչպէս նաև տեղապահ վարդապետը իրենց բացախյութեամբ փայլեր են. բայց ներկայ եղող համեստ դասակարգի ժողովուրդը շատ դժմացեր է, և այս առթիւ հանգանակութիւն մըն ալ կատարուելով 700 զրուչ գոյացեր է:

— 25 որբեր և որբուհիներ ասկից երկու ամիս առաջ Ալաշկերտի գիւղերէն մէկէն ճամբայ կը հանուին, Կարին բերուելով բողոքականաց յանձնուելու համար: Բայց իմացուելով որ այդ մասին ոչ կառավարութիւնը տեղեկութիւն ունի և ոչ ալ ազգային պաշտօնական մարմինը, այդ որբերն ու որբուհիները ետ դարձուեր են:

Այդ որբերը բերողը ասկէց

առաջ ալ ուրիշ 5 որբեր բերելով յանձներ է Կարնոյ բողոքականաց: Պատրիարքարանը գումար մը զրկեր է Կարնոյ Առաջնորդարանը, որպէս զի շուտով այդ որբերուն յանձնուի:

— Յովհաննէս էֆ. Էսայեան ամսոյս 26ին մեռեր է Ֆրանսայի մէջ:

— Գարա-Կէօմրիկի հրկեղեւի եկեղեցւոյն Աստուածամօր պատկերը փոխադրուած է վերջապէս Պալատու եկեղեցին, և այս առթիւ պատրիարքը հանդիսաւոր պատարագ մատուցեր է հոն ամսոյս 27ին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Չինական շարժումներէն ետքը Արեւելքի երկրորդ հիւանդ մարդը, Թուրքիան ալ շարժուելու վրայ է:

Թերեւս գուշակելով որ Մայրաքոյն Արեւելքի մէջ գործերը կրնան երկարիլ, և եւրոպական տէրութիւնները իրար անցնիլ, կուզէ ինքն ալ պատրաստ գրտնուիլ... գործելու համար, և աւոր համար պատրաստութիւններ կը տեսնէ:

Պոլսէն եւրոպական թերթերու կը հեռագրուի թէ Սուլթանը Գրուբի գործարանին ուսուցարած է 208 արագահարուած թնդանօթ և երկու թօրփիլ: Ասոնց գինը մօտաւորապէս 727,000 Անգլ. ոսկի կենթագրուի:

Թայմիլ Փարիզի թղթակիցը Պ. Պովից, այս առթիւ մէջ տեղ կը հանէ Թուրքիոյ տնտեսական տագնապը և կըսէ թէ դեսպանները 4—5 ամիսներէ ի վեր ամսական չեն բնագումար, և շարունակ կը գրեն Պոլիս որ իրենց դրամ զրկուի:

Նոյն թղթակիցի ըսածին նայելով Դամասկոս-Հիճազ երկաթուղւոյն ծրագրերը, եւրոպական երկրաշափնեբու ծիծաղեն առարկայ եղած է:

Իսկ երկաթուղի մէջ շատ կը փայփայուի այդ գաղափարը, և կը կարծեն որ եթէ իրականանայ այդ, այլևս առաջն առնուած պիտի ըլլայ Անգլիական ոտնձգութիւններու, որ թուրքերու կարծիքով նպատակ ունին եղեր Հիճազն ալ գրաւելով տիրանալ ամբողջովին Կարմիր Մովուն:

— Քաղաքական շրջանակներու մէջ մեծ ուշադրութիւն գրաւած է երկու ուսուցիչներու վտարուէն անցնիլը:

— Ֆրանսայի գեսպանատունը յաջողեր է Հայկական Հարգերու ատեն, Ֆրանսական հպատակներու ու կրօնական միսիօնարներու վրասին համար գաղտնաբաբ համաձայնութեան մը յանգիլ թուրք կառավարութեան հետ, և ար-

դէն 25 0յ0 կանխավճար մը եղած է:

— Սուլթանը կը խորհի եղեր իր 25ամեակի տօնին առթիւ Պոլիս հրաւիրել Ռուսիոյ գահաժառանգ իշխանը:

— Տամատ Մահմուտ փաշա իր զաւակներովը վերջերս ժընէվէն մեկնել է Եգիպտոս:

— Պոլսոյ մէջ ամենախիստ միջոցներ ձեռք առնուած են անիշխանականներուն դէմ: Մեծ հասկողութեան տակ են մասնաւորապէս իտալացիները:

Շատ մը իտալացի գործաւորներ որոնք երկաթուղի մէջ կաշխատէին ճամբուեր են:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Դաշնակից բանակներու դէպի Բէքին յառաջխաղացութիւնը կը շարունակուի:

Թիէն-Չինէն կը հեռագրեն օգոստոս 5 (Ն. Տ.) թուականով թէ դաշնակից բանակները 16,000 զինուորներով Բէի-Չանկի մէջ յարձակեր են Չինացիներուն վրայ, կիրակի արշալոյսին:

Չինացիները մեծ բազմութեամբ խռնուած էին քաղաքէն դուրս գետին երկու եղերքը: Ժամը 3ին Անգլիական, Ռուսական և ձաբոնական բանակները 4 թնդանօթով կրակ ըրին թշնամույն վրայ:

Դաշնակից բանակները յաջողեցան ետ մղել Չինացիները գետին արեւելեան կողմը և գրաւել անոնց գիրքը:

Այս պատերազմը տեսած է 9 ժամ:

Ռուսները մեծ կորուստներ ունեցեր են, Անգլիացիներէն 66 մեռելաք է վիրաւոր: Դաշնակից բանակներու ամբողջ կորուստը կը համարուի 750—1000:

— Հիւսիսային կողմէն Ռուս-ձաբոնական բանակ մը կը քալէ Բէքինի վրայ: Այս բանակին շարժումները գաղտնի կը պահուին:

— Գերմանացի զօրավար Վալտէրսէ, որոշուեր է ընդհանուր հրամանատար դաշնակից բանակներուն:

Վիլհէլմ կայսրը ինչպէս նաև Ռուսիոյ Չարը փութացեր են շնորհաւորել զանի:

— Բէքինէն փախող Չինացիներ կը պատմեն թէ՛ հարուստներու բնակարանները կողոպտուեր են եւսնկ-Լու և Թունկ-Քու-Սիանկ զօրավարներու «քաջերուն» կողմէ:

— Անգլիական դեսպան Մագտոնալտ կը հեռագրէ Լօնտօն՝ թէ ամէն շաբթու իրենց նոր պաշար կը տրուի կառավարութեանէն: Վախ կը յայտնէ որ դաշնակից բանակներու յառաջխաղացումը նոր վտանգ մը պատճառէ իրենց:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բէպթաուսէն հեռագրեր մը կը տեղեկացնէ թէ մեծ պատերազմ մը կատարուեր է Յուլիս 23ին և որ շարունակուեր է մինչեւ 24 էփանար-Իիվըրի մօտերը:

Մանրամասնութիւնները յայտնի չեն. բայց կենթագրուի որ զօրավար Քարինկթօն և Համիլթօն յաջողած են ազատել Ռուս-թէնպուրկի մէջ պաշարուած Անգլիական զօրքերը:

— Բրէթօրիայէն կը հեռագրեն թէ Պօէրները նորէն գրաւեցին Սպրինքը Անգլիական զօրքերուն հեռանալէն ետքը:

— Կոմս Լամստորֆ որ առժամապէս կը վարեր Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը, վերջնականապէս հաստատուեր է այդ պաշտօնին մէջ:

— Գահիրէէն կը հեռագրեն թէ որոշուած է 2 ամսուան ժամանակամիջոցի մէջ Տարֆուս զօրքեր զրկել Ալի-Պէն-Տիլան ցեղապետին դէմ, որ ինքզինքը Տարֆուրի սուլթան հրատարակեր է Մահմուտի ձերբակալուելէն ետքը:

Ա Չ Գ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ Թ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ  
Նոր Ընթերցարան  
Բ. ՏԱՐԻ  
ՊԱՏԵՐԱԶԱՐԿ

Նոր-Ընթերցարանի այս Բ. տարին ալ պիտի գտնէ անտարակոյս այն ընդունելութիւնը, որուն արժանացաւ Ա. տարին, եւ որուն ուղղութեամբ պատրաստուած է արդէն:

Գինն է 1 ֆրանք. գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ: Գիծել հետեւեալ հասցէին՝  
Թ. Կ. Պօնտուքեան  
(Պուլկարիա) Վառնայ  
Երանօթ. — Գ. տարին լոյս պիտի տեսնէ յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբը:

« ԾԱԽԻՂ »

Շաւիղ ձեռքէ չի ծախուիր: Բաժնեկրներն է՝ Պուլկարիոյ համար 10 ֆրանք, արտասահմանի համար 12 ֆրանք, Ամերիկայի համար 2 1/2 սօլար:

Հասցէն՝  
Rédaction de la revue «Chavigh»  
pensionnat Arménien  
Varna

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագրեր, մահազգ:

Գիները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

Յինչ ԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿԻ